դինի որդի Կյուրիկեինը և վերջինիս եղբայր Սմբատինը, որ ապրել են 11-րդ դարում[1]։

Այդպես ենթադրելու հիմք են ծառայել հետևյալ հանգամանքները.

1. Բարձրաքանդակների վրա Գուրգենը ձախ կողմում է կանգնած, որ եթե ձախից դեպի աջ հաշվելու լինենք, առաջինն է, իսկ Սմբատը, աջ կողմումն է, այսինքն երկրորդը։ Ինչպե՞ս կարող էր Անիի Տիեզերակալ թագավոր Սմբատը իրենից ավելի փոքր թագավորի աջ կողմում կանգնել և նրանից հետո դասվել։

2. Սմբատ Տիեզերակալի եղբայր Գուրգենը երբեք Կյուրիկե չի կոչվել։

3. Սմբատ Տիեզերակալի և նրա եղբայր Գուրգենի բարձրաքանդակները կան Հաղբատի տաճարի վրա, որտեղ նրանք բոլորովին այլ տարազով են հանդես գալիս։ Այստեղ նրանք արաբական չալմա են կրում գլխներին և հագել են արաբական վերնազգեստ։

Նկ. 5. Ամենափրկիչ եկեղեցին հր կողմից։

4. Կիրակոս Գանձակեցին գրում է, որ Ամենափրկիչ եկեղեցին շինել է Դավիթ Անհողինի որդի Կյուրիկեն։

Այս չորս կետերն էլ հիմք չեն կարող ծառայել այդ սխալ ենթադրության, հետևյալ պատճառներով։

Սանահնի բարձրաքանդակի մեջ Գուրգենի ձախ կողմում կանգնելը բոլորովին էլ վարկաբեկիչ հանգամանք չէր կարող համարվել նրա եղբայր Սմբատ Տիեզերակալի համար։ Մեր մատենագրության մեջ էլ մի բանի տեղերում Գուրգենի անունը Սմբատ Տիեզերակալի անունից առաջ է հիշատակված։ Այսպես, օրինակ՝ ժամանակագիրներից մեկը գրել է, որ Սանահնի և Հաղբատի վանքերը շինել է Աշոտ թագավորի կին Խոսրովանուշը.

«Վասն արեշատութեան որդոց իւրեանց՝ Գուրգենայ, Սմբատայ և Գագկայ»[2]։

Սանահնի «Քոթուկի» մեջ ևս Գուրգենի

[1] Brosset, Deux historiens armèniens, Petersbourg, 1870, 51, ծանոթություն։ Հ. Ղ. Մովսեսյան, Լոռիի Կյուրիկյան թագավորներու պատմությունը, Վիեննա, 1923, էջ 32։ Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա, Երևան, 1934, էջ 210—212։

[2] Մանր ժամանակագրություններ 13—18-րդ դդ., հատ. 2-րդ, Երևան, 1956, էջ 501։